

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵՔ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մարտի երկրորդ կեսին Երևանն ապրեց բուռն մշակութային կյանքով: Ընթացիկ թատերական, նկարչական և երաժշտական մթնոլորտը առավել ևս հագեցավ երեք կարևոր հոբելյանների մեծաշուք կատարումով:

Մարտի 21-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում նշվեց մեծ հայրենասեր, վիպասան Րաֆֆու ծննդյան 150-ամյակը: Պետական գործիչների, գրականագետների, գրողների և եղբայրական հանրապետությունների ներկայացուցիչների ելույթներում արժևորվեց Րաֆֆու գրական ժառանգությունը: Նշվեց, որ մեծ է նրա դերը ազգային-ազատագրական շարժումների խմորման մեջ. Րաֆֆու վեպերը հզոր ոգևորություն հաղորդեցին հայ երիտասարդությանը, որը ոտքի էր կանգնել՝ պաշտպանելու իր մարդկային ու ազգային իրավունքները: Րաֆֆին նաև գեղագետ էր. նրա վեպերը շնչում են բանաստեղծությամբ, մանավանդ հայրենի երկրի նկարագրության էջերում: Րաֆֆին խորապես ուսումնասիրեց կյանքը, իր և հարևան ժողովուրդների ամենօրյա փոխհարաբերությունները, և այդքանով իր գրականությունը դարձավ իրապաշտական: Բայց և Րաֆֆին տեսլապաշտ էր. նա ուներ ապագա գեղեցիկ հայրենիքի երազը, և ահա այսօր պետական դրոշը ծածանվում է Արարատի փեշերին:

Խորհրդային Հայաստանը Րաֆֆու երազի մարմնավորումն է:

*
* *

Մարտի 25-ին Կոմիտասի անվան Սենեկային երաժշտության տանը հանդիսավորապես նշվեց արևմտահայ գրականության ամենաքնքուշ հոգու՝ Միսաք Մեծարենցի ծննդյան 100-ամյակը:

Բանաստեղծներ Վահագն Դավթյանը՝ բացման խոսքով, և Ռաֆմիկ Դավոյանը՝ վեկուցումով ներկայացրին Մեծարենցի բանաստեղծական խորհրդավոր աշխարհը: Վաղամեռիկ բանաստեղծը մեծ գեղագետ էր. այդ են վկայում նրա նրբին արվեստը՝ բանաստեղծական նրբակերտ պատկերներ, գույների բազմազանություն՝ գեղանկարչի նրբազգացությամբ, և մարդկային հոգեբանության մեղմ ցոլացումներ: Արձակագիր և տաղանդավոր թարգմանիչ Կարապետ Սուրենյանը ընդգծեց, որ Մեծարենցը «անանձնական» ուրախության ասպետ էր՝ համամարդկային սիրո տենչով, խաղաղ գոյության, երանավետ կյանքի ցանկությամբ՝ բոլորին, բոլորին: Հատկապես մատնանշվեց, որ Մեծարենցի լեզուն բյուրեղային է և ոսկեզօծ, նրա բանաստեղծության մեջ հայերենը հնչում է գերագույն նրբությամբ, բառիմաստային նրբերանգների անսպառ հարստությամբ:

Ապա հանդիսավոր երեկոն լցվեց Մեծարենցյան բանաստեղծության տրամադրությամբ՝ ասմունքի և երաժշտության միջոցով Մետաքսյա Սիմոնյանը, Հրաչուհի Ջինանյանը, Լուսինե Զաքարյանը, Խորեն Պալյանը և այլ արվեստագետներ հանդիսականներին պարգևեցին հոգեկան գեղեցիկ ապրումների անմոռանալի պահեր:

*
* *

Մարտի 28-ին Ծիծեռնակաբերդի գեղադիր բարձունքում գտնվող մարկահամերգային համալիրի հանդիսասրահը հյուրընդ-

կալել էր Երևանի արվեստասեր հասարակայնությանը: Տոնվում էր Հայաստանի ակադեմիական պետական քառաձայն երգչախմբի 50-ամյակը: Բեմը զարդարված էր պայծառ ծաղկեփնջերով: Վաստակաշատ երգչախմբի անդամները ունկնդրում էին արվեստագետ-խմբավար Էմմա Ծատուրյանի, Հայաստանի երգահանների միության, թատերական ընկերության և եղբայրական հանրապետությունների, Մոսկվայի ու Լենինգրադի ներկայացուցիչների ողջույնի խոսքերը երգչախմբի անցած փառապանծ ուղու մասին: Թաթուլ Այթունյանի, Արամ Տեր-Հովհաննիսյանի և մանավանդ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական երգչախումբը կատարել է ստեղծագործական մեծ սխրանքներ՝ արդարորեն արժանանալով Սովետական Միության և արտասահմանյան մի շարք երկրների երաժշտասեր հասարակայնության ջերմ գնահատանքին: Այսօր Հայաստանի պետական երգչախումբը աշխարհի համբավավոր երգչախմբերից մեկն է, որ իր երգացանկով և կատարողական վարպետությամբ կարող է պատիվ բերել ցանկացած ժողովրդին: Դրա վկայությունը եղավ այն համերգը, որ տվեց երգչախումբը հավարտ պաշտոնական մասի: Կոմիտասի, Եկմալյանի, Բեթհովենի, Վերդիի Գերշուինի և այլ երաժիշտների գործերի թարմ մեկնաբանությունը մեկ անգամ ևս հաստատեց, որ երգչախումբը ներուժականություն ունի՝ մշտապես նորոգվելու և նորանոր ստեղծագործական բարձունքների ձգտելու համար:

ԹՂԹԱԿԻՑ